ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

<u>№ 2621/1543</u>

25.05.2015թ.

ՀՀ ոստիկանության պետ՝

գեներալ-լեյտենանտ

պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի մայիս ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի ՁՊՎ արձանագրել էր, որ տվյալ ՁՊՎ-ում կալանավորված անձանց դատաքննությանը մասնակցելու նպատակով ՁՊՎ են տեղափոխում և պահում ոչ թե <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դատավորի կողմից տրված որոշման համաձայն, այլ դատավորի կողմից ներկայացրած գրության հիման վրա: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1, 2, 3/*

Տեղեկացնում ենք, որ ներկայացված փաստի վերաբերյալ Դիտորդական խումբը այդքան էլ չի տեսնում վարչակազմի մեղավորությունը և կարծում է, որ խնդիրը կապված է դատավորների կողմից որոշումները չտրամադրելուն:

Դիտորդական խումբը նշված հիմնախնդրի վերաբերյալ դիմել է ՀՀ ԱՆ Դատական դեպարտամենտ, հարցը կարգավորելու ուղղությամբ:

Այսպիսով, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել տվյալ օրենքի պահանջի կարգավորումը պահպանելու ուղղությամբ:

ՀՀ ԱՆ Դատական դեպարտամենտից պատասխան ստանալուն պես, պատճենը կներկայացվի Ձեզ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 2342
26 05 2015 թ.

ՀՀ ՈՍՏԻ... ...ԱՇԽԱՐՀ
3362
ՄՏԻՑ №
26 05 201...թ.

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված
անձանց պահելու վայրերում վերահսկողություն
իրականացնող հասարակական Դիտորդական
խմբի նախագահ՝

ՀասմիկՍահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87

licemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

30.05.15թ.
2/2-1-1763

Ձեր՝ 25.05.2015թ. թիվ 2621/1543 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հ.Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. մայիս ամսին ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված փաստը, որ դատական նիստերին մասնակցությունն ապահովելու համար կալանավորված անձինք ՁՊՎ են տեղափոխվում և պահվում դատավորների կողմից տրված գրությունների այլ ոչ թե որոշումների հիման վրա, քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում:

Հիշյալ խնդրի կապակցությամբ ՀՀ ոստիկանության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ ԱՆ Դատական դեպարտամենտ՝ միջոցներ ձեռնարկելու, կալանավորված անձանց ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներ տեղափոխելու և պահելու գործընթացը իրականացնելիս <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով առաջնորդվելու համար:

ՀՀ ոստիկանությունը իր երախտագիտությունն է հայտնում դիտորդների խմբին վերը նշված հիմնախնդիրը վեր հանելու, ինչպես նաև դրան դրական լուծում տալու նպատակով ՀՀ ԱՆ Դատական դեպարտամենտ դիմելու համար:

ՀՀ ոստիկանության շտաբ